



Ավետիք Իսահակյան

Մաքսիմ Ռիլսկուն, 1931թ . , օգոստոսի 2, Կիսլովոդսկ

Իմ թանկագի՛ն Մաքսիմ Ֆադեևիչ.

Մեծ ուրախությամբ ստացա ձեր խմբագրությամբ լույս տեսած իմ
բանաստեղծությունների հատրնտիր ժողովածուն: Ես շատ երջանիկ եմ, որ Դուք
այդքան ջանք ու եռանդ եք ներդրել, որպեսզի ուկրաինացի ընթերցողին
ծանոթացնեք իմ պոեզիային:

Ներեցեք ինձ, որ այսքան ուշացումով եմ պատասխանում. մեկ ամսից ավելի
հիվանդ էի: Բայց այդ, ես շատ էի ուզում, որ ինձ կարդային ժողովածուն /իսկ
դրա համար անհրաժեշտ էր գտնել մեկին, որը տիրապետեր ուկրաիներեն
լեզվին/ և օգնեին ինձ Ձեզ նամակ գրելու Ձեր մայրենի լեզվով: Եվ այժմ ես
համոզվեցի, որ Դուք, Ձեր և իմ ընկերների բանաստեղծությունները թարգմանել
եք ճիշտ, լավ, կարողացել եք իմ խոհերն ու զգացմունքները, այն բոլորը, ինչ
թանկ ու հարազատ է իմ սրտին, հաղորդել գեղեցիկ, նուրբ ու հարուստ լեզվով,
անմոռաց, սրտալի երգերի լեզվով, որոնք ես սիրում եմ երկար տարիներ ի վեր:
Մեծ երջանկություն է ինձ համա, որ ուկրաինացի հերոսական և
բանաստեղծական ժողովուրդը կկարդա իմ բանաստեղծությունները և, ուզում եմ
հուսալ, որ կսիրի դրանք: Իմ անկեղծ շնորհակալությունը Ձեզ, թանկագին
Մաքսիմ Ֆադեևիչ, շնորհակալություն թանկագին Պավել Գրիգորևիչին, ինչպես
նաև Վ. Սոսյուրային, Լ. Պերվունայսկուն, Օ. Նովիցկուն և բոլոր նրանց, ովքեր
թարգմանել են իմ բանաստեղծությունները:

Ձերնորեն, ամբողջ սրտով ողջունում եմ Ձեզ, ցանկանում եմ երկար կյանք,
առողջություն և ուժ, նոր հաջողություններ աշխատանքում:

Ձեր՝ Ա. Իսահակյան